# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

23 ապրիլի 2025 թվականի N 1000

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ 13-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 35Բ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Ալիբեգի Չոբանյանի 13.03.2025թ. թիվ 02/3563 դիմումը, անշարժ գույքի սեփականության նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 0275439 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, 13.03.2025 թվականի անշարժ գույքի առուվաճառքի թիվ 1484 պայմանագիրը (նոտարական ակտի կոդ:763-20250313-2-8832782), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

Վանաձոր համայնք գյուղ Գուգարք 13-րդ փողոց, թիվ 35բ հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, գյուղ Գուգարք 13-րդ փողոց, 35/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2025 թվականի N 1001

### «ՄԱՐԳԱՐՅԱՆՍ ԲԻԼԴԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ ՀԿՀ-ի և «Մարգարյանս Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ի միջև 21.02.2025թ կնքվել է «Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների գնման» ՀՀ ԼՄՎՀ ԳՀԱՇՁԲ-25/16-1 ծածկագրով պայմանագիր:

20.02.2025թ. «Մարգարյանս Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Բոջուկյանի, միակողմանի կնքել է «Տուժանքի մասին» վերտառությամբ համաձայնագրեր:

18.03.2025թ-ին «Մարգարյանս Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ին ծանուցվել է ֆինանսական միջոցների հատկացվելու մասին համաձայնագիր, որով Կատարողը պարտավորվում է 15 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել իր կողմից ստորագրած համաձայնագիրը և պայմանագրի, որակավորման ապահովումները (բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով):

08.04.2025թ-ը ներառյալ «Մարգարյանս Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն չի ներկայացրել վերոնշյալ փաստաթղթերը, այսպիսով խախտելով պայմանագրի 7.15 կետը:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմ ՀԿՀ-ն, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և նշված պայմանագրի 7.15-րդ կետը, իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողը՝ «Մարգարյանս Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, խախտել է պայմանագրի վերոգրյալ կետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (Այսուհետ՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի

գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը, կողմերից մեկի պահանջով, կարող է փոփոխվել կամ լուծվել դատարանի վճռով միայն մյուս կողմի թույլ տված՝ պայմանագրի էական խախտման կամ օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ դեպքերում:

Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս:

Օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալները և հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետը, 2-րդ մասը, 15-րդ հոդվածի 6-րդ մասը, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշմամբ սահմանված կարգի 18-րդ կետը, 32-րդ կետի 9-րդ ենթակետը.

Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատու կողմից պայմանագրի միակողմանի լուծման կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և /կամ/ պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և /կամ/ որակավորման ապահովման վճարը:

Ելնելով վերոգրյալից՝ որոշում եմ.

1.«ՄԱՐԳԱՐՅԱՆՍ ԲԻԼԴԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ սույն որոշումը կայացվելուն օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 23
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

25 ապրիլի 2025 թվականի N 1002

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 12-Ի «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 655 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով գնումների պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման առարկաների բնութագրերի նախագիծը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2017թ ապրիլի 13-ի «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման կարգը հաստատելու մասին» թիվ 390-Ն որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածով՝ ***որոշում եմ.***

1.Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի մարտի 12-ի «Վանաձոր համայնքի ղեկավարի 2025 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» թիվ 655 որոշման հավելվածում կատարել լրացում՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք.Վանաձոր

Հավելված

Հաստատում եմ

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝

______________ Ա. Փելեշյան

Թիվ 1002 որոշում

« 25 » ապրիլ 2025թ.

| Պատվիրատու Վանաձոր համայնք | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Անվանումը 2025թ. Գնումների պլանի լրացում 5 | | | | | | |
| Ֆինանսավորման աղբյուրը Վանաձոր համայնքի 2025թ. բյուջե | | | | | | |
| **Միջանցիկ կոդը՝ ըստ ԳՄԱ դասակարգման** | **Ապրանքների,ծառայությունների և աշխատանքների անվանումը** | **Գնման ձևը(ընթացակարգը)** | **Չափման միավորը** | **Միավորի գինը** | **Քանակը** | **Գումարը (հազար) դրամ** |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| | ***Բաժին -01 խումբ -1 դաս-1 Աշխատակազմի պահպանման ծախսեր*** | | | | | |
| | **կապի ծառայություններ/հոդված 4214/** | | | | | |
| 72411100 | ինտերնետ կապի ծառայությունների ձեռքբերում | ՄԱ | դրամ | 998000 | 1 | 998.00 |
| | **կոմունալ ծառայություններ /հոդված-4213/** | | | | | |
| 50321700 | դեռատիզացիա և դեզինֆեկցիա | ՄԱ | դրամ | 420000 | 1 | 420,00 |
| | ***Տրանսպորտային նյութեր, այդ թվում՝*** | | | | | |
| | ***Վառելիք/հոդված-4264/*** | | | | | |
| 09132200 | բենզին (ռեգուլյար) | ԷԱՃ | լիտր | 436,1 | 19500 | 8503,95 |
| 09411710 | սեղմված բնական գազ | ԷԱՃ | կգ | 310 | 5034 | 1560,54 |
| | **Ծառայություններ /հոդված 4231/** | | | | | |
| 79821170 | Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար այլ տպագրական ծառայություններ | ՄԱ | դրամ | 957474 | 1 | 957,47 |
| 98391200 | Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ընդհանուր բնույթի այլ վարչական ծառայություններ | ՄԱ | դրամ | 905510 | 1 | 905,51 |
| 79531100 | Գրավոր թարգմանության ծառայություններ | ՄԱ | դրամ | 950000 | 1 | 950 |
| **համակարգչային ծառայություններ /հոդված 4232/** | | | | | | |
| 72261180 | **<E Community - Համայնքների եկամուտների կառավարման> էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ** | | | | | |
| 72261180 | <E Community - Համայնքների եկամուտների կառավարման> էլեկտրոնային համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ | ՄԱ | դրամ | 15312000 | 1 | 15312,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 72261110 | համակարգչային ծրագրերի ուղեկցում և սպասարկում | ՄԱ | դրամ | 130000 | 1 | 130.0 |
| 72261180 | **Վանաձորի համայնքապետարանի 2025թ. կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ** | | | | | |
| 72261180 | Վանաձորի համայնքապետարանի 2025թ. կարիքների համար համակարգչային ծրագրային սպասարկման ծառայություններ | ՄԱ | դրամ | 960000 | 1 | 960,00 |
| 50311120 | Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային տեխնիկայի վերանորոգման և պահպանման ծառայություններ | ՄԱ | դրամ | 996000 | 1 | 996,00 |
| **կառավարչական ծառայություններ/հոդված 4235/** | | | | | | |
| 79211150 | Աուդիտորական ծառայություններ | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 79211150 | Աուդիտորական ծառայություններ | ԳՀ | դրամ | 1788000 | 1 | 1788,00 |
| **Վանաձոր համայնքի կարիքների համար շենքերի տեխնիկական վիճակի եզրակացություններ /հոդված 4239/** | | | | | | |
| 71631140 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի վարչական շենքի տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |
| 71631140 | Վանաձոր համայնքի «Վանաձորի Էդուարդ Կզարթմյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |
| 71631140 | Վանաձոր համայնքի Վանաձորի քաղաքապետարանի վարչական շենքի տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |
| 71631140 | Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 15 մանկապարտեզ» ՅՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |
| 71631140 | Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 19 մանկապարտեզ» ՅՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |
| 71631140 | Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 24 մանկապարտեզ» ՅՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 71631140 | Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 28 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |
| 71631140 | Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 31 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |
| 71631140 | Վանաձոր համայնքի «Վանաձորի թիվ 41 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի տանիքի կրողականության տեխնիկական վիճակի եզրակացություն | ՄԱ | դրամ | 110500 | 1 | 110.5 |
| **Մասնագիտական ծառայություններ/հոդված 4241/** | | | | | | |
| 73432100 | Ավտոմեքենաների գնահատում | ՄԱ | դրամ | 250000 | 1 | 250.0 |
| | ***Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում /հոդված-4252/*** | | | | | |
| 72611100 | Վանաձորի համայնքապետարանի 2025թ. կարիքների համար համակարգչային տեխնիկական օժանդակման ծառայություններ | ՄԱ | դրամ | 997800 | 1 | 997.8 |
| 50111180 | ավտոլվացման ծառայություններ | ԳՀ | դրամ | 560000 | 1 | 560.0 |
| | ***Գրասենյակային ապրանքներ և նյութեր /հոդված-4261/*** | | | | | 8484,28 |
| 30234640 | Հիշողության կրիչ 1 | ԷԱՃ | հատ | 3500 | 20 | 70000 |
| 30192133 | Սրիչ | ԷԱՃ | հատ | 250 | 80 | 20000 |
| 30197220 | Ամրակ1 | ԷԱՃ | հատ | 2,5 | 800 | 2000 |
| 30197220 | Ամրակ2 | ԷԱՃ | հատ | 3,5 | 20000 | 70000 |
| 30192121 | Գրիչ1 | ԷԱՃ | հատ | 600 | 120 | 72000 |
| 30192121 | Գրիչ2 | ԷԱՃ | հատ | 90 | 800 | 72000 |
| 30192700 | Գրառումների գիրք | ԷԱՃ | հատ | 2500 | 38 | 95000 |
| 30192125 | Մարկեր | ԷԱՃ | հատ | 150 | 120 | 18000 |
| 30197622 | Թուղթ 1 | ԷԱՃ | կգ | 800 | 6880 | 5504,000 |
| 30197233 | Թղթապանակ 1 | ԷԱՃ | հատ | 600 | 180 | 108000 |
| 30197232 | Թղթապանակ 2 | ԷԱՃ | հատ | 350 | 100 | 35000 |
| 30197230 | Թղթապանակ 3 | ԷԱՃ | հատ | 130 | 120 | 15600 |
| 30197230 | Թղթապանակ 4 | ԷԱՃ | հատ | 1500 | 50 | 75000 |
| 30197230 | Թղթապանակ 5 | ԷԱՃ | հատ | 1000 | 100 | 100000 |
| 30192700 | Թղթապանակ ռեգիստր 1 | ԷԱՃ | հատ | 650 | 180 | 130000 |
| 30197231 | Ֆայլ 1 | ԷԱՃ | հատ | 1800 | 50 | 90000 |
| 35821400 | ՀՀ ազգային դրոշ | ԷԱՃ | հատ | 9000 | 70 | 630000 |
| 30199290 | Ծրար 1 | ԷԱՃ | հատ | 15 | 8000 | 120000 |
| 30199290 | Ծրար 2 | ԷԱՃ | հատ | 20 | 3000 | 60000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 30199290 | Ծրար 3 | ԷԱՃ | հատ | 40 | 700 | 28000 |
| 30199290 | Ծրար 4 | ԷԱՃ | հատ | 15 | 1500 | 22500 |
| 30192780 | Էջանիշ | ԷԱՃ | հատ | 200 | 200 | 40000 |
| 30197322 | Կարիչ 1 | ԷԱՃ | հատ | 1500 | 80 | 120000 |
| 30197322 | Կարիչ 2 | ԷԱՃ | հատ | 1500 | 80 | 120000 |
| 30197112 | Կարիչի ասեղ 1 | ԷԱՃ | տուփ | 120 | 120 | 14400 |
| 30197100 | Կարիչի ասեղ 2 | ԷԱՃ | տուփ | 170 | 120 | 20400 |
| 30192130 | Մատիտ | ԷԱՃ | հատ | 1000 | 100 | 100000 |
| 22811150 | Նոթատետր 1 | ԷԱՃ | հատ | 260 | 80 | 20800 |
| 22811150 | Նոթատետր 2 | ԷԱՃ | հատ | 2500 | 50 | 125000 |
| 30199420 | Նշումների թուղթ կպչուն 1 | ԷԱՃ | հատ | 180 | 400 | 72000 |
| 30199430 | Նշումների թուղթ 2 | ԷԱՃ | հատ | 1100 | 100 | 110000 |
| 30192700 | Շտամպի բարձիկ | ԷԱՃ | հատ | 300 | 10 | 3000 |
| 30192114 | Շտամպի բարձիկի թանաք | ԷԱՃ | հատ | 1200 | 10 | 12000 |
| 30192160 | Ջնջիչ | ԷԱՃ | հատ | 150 | 60 | 9000 |
| 30141200 | Հաշվիչ մեքենա 1 | ԷԱՃ | հատ | 2500 | 40 | 100000 |
| 39241210 | մկրատ 1 | ԷԱՃ | հատ | 450 | 50 | 22500 |
| 30192700 | Սոսինձ չոր | ԷԱՃ | հատ | 350 | 50 | 17500 |
| 39263510 | սեղմակ 1 | ԷԱՃ | հատ | 10 | 960 | 9600 |
| 39263520 | սեղմակ 2 | ԷԱՃ | հատ | 11,7 | 1800 | 21060 |
| 39263520 | սեղմակ 3 | ԷԱՃ | հատ | 14,2 | 1800 | 25560 |
| 39263520 | սեղմակ 4 | ԷԱՃ | հատ | 14,2 | 1800 | 25560 |
| 39263520 | սեղմակ 5 | ԷԱՃ | հատ | 21,7 | 1200 | 26040 |
| 39263520 | սեղմակ 6 | ԷԱՃ | հատ | 29,2 | 1800 | 52560 |
| 39263520 | սեղմակ 7 | ԷԱՃ | հատ | 47,5 | 1200 | 57000 |
| 30192100 | Ռետին | ԷԱՃ | հատ | 90 | 100 | 9000 |
| 39292530 | Քանոն 1 | ԷԱՃ | հատ | 290 | 80 | 23200 |
| | **Ծառայություններ /հոդված-4264/** | | | | | |
| | ***Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում*** | | | | | **5029,25** |
| 50111130 | Տոյոտա Քամրի ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 1000000 | 1 | 1000,00 |
| 50111130 | Մերսեդես Բենց E 200 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 700000 | 1 | 700,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 50111130 | ՎԱԶ 21214 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 829250 | 1 | 829,25 |
| 50111130 | ԶԻԼ-130 ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 1250000 | 1 | 1250,00 |
| 50111130 | ԿԱՎԶ մակնիշի ավտոմեքենայի ավտոպահեստամասերի ձեռքբերում և փոխարինում | ԳՀ | դրամ | 1250000 | 1 | 1250,00 |
| | *Ապրանքներ /հոդված -4267/* | | | | | **753,88** |
| 41111100 | Խմելու ջուր /19լ տարայով/ | ՄԱ | լիտր | 95 | 2888 | 274,36 |
| 39221350 | Միանգամյան օգտագործման բաժակ | ՄԱ | հատ | 12 | 14000 | 168,00 |
| 41111100 | Խմելու ջուր /պլաստիկ. շշերով, 0.5լ-ոց/ | ՄԱ | լիտր | 240 | 618 | 148,32 |
| 15981200 | Հանքային ջուր /պլաստիկ. շշերով, 0.5լ-ոց/ | ՄԱ | լիտր | 320 | 510 | 163,20 |
| | **Բաժին-04 խումբ-2 դաս-1 Գյուղատնտեսություն** | | | | | |
| 85221000 | Վանաձոր համայնքի կարիքների համար անասնաբուժական ծառայությունների ձեռքբերում | ԷԱՃ | դրամ | 816000 | 1 | 816.0 |
| 85221000 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի կարիքների համար անասնաբուժական ծառայությունների ձեռքբերում | ԷԱՃ | դրամ | 960000 | 1 | 960.0 |
| 85221000 | Վանաձոր համայնքի Շահումյան բնավայրի կարիքների համար անասնաբուժական ծառայությունների ձեռքբերում | ԷԱՃ | դրամ | 600000 | 1 | 600.0 |
| 85221000 | Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի կարիքների համար անասնաբուժական ծառայությունների ձեռքբերում | ԷԱՃ | դրամ | 360000 | 1 | 360.0 |
| | **Բաժին -04 խումբ -5 դաս-1 ճանապարհային տրանսպորտ** | | | | | |
| | **Ծառայություններ /հոդված-4239/** | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 50231300 | Վանաձոր համայնքի ճանապարհային նշանների և լուսաֆորային օբյեկտների սպասարկում | ԳՀ | դրամ | 4899625 | 1 | 4899.625 |
| | **Բաժին -04 խումբ -5 դաս-1** | | | | | |
| | **Ծառայություններ /հոդված-5113/** | | | | | |
| 71351540 | Վանաձոր համայնքի Եղիշե Չարենցի փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | 447 444 | 1 | 447.444 |
| 71351540 | Վանաձոր համայնքի Վահան Տերյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | 1 080 000 | 1 | 1080.0 |
| 71351540 | Վանաձոր համայնքի Թատերական և Սոս Սարգսյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն | ԳՀ | դրամ | 534 600 | 1 | 534.6 |
| | **Բաժին -05 խումբ -4 դաս-1 կենսաբազմազանություն և բնության պաշտպանություն** | | | | | |
| | **Ծառայություններ /հոդված-4239/** | | | | | |
| 90721100 | Վանաձոր համայնքի տարածքում թափառող կենդանիների ստերիլիզացման, ամլացման ծառայություններ | ԳՀ | դրամ | 15000000 | 1 | 15000,00 |
| | **աշխատանքներ/հոդված 4251/** | | | | | |
| 45231177 | փողոցների փոսային ընփացիկ նորոգման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 69746990 | 1 | 69746,99 |
| | **Ծառայություններ /հոդված-5113/** | | | | | |
| 98111140 | Վանաձոր համայնքի Եղիշե Չարենցի փողոցի հիմնանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություն | ՄԱ | դրամ | 509340 | 1 | 509.34 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 71351540 | Վանաձոր համայնքի Տարոն-2 թաղամասի փողոցների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում /պետության մասնաբաժին/ | ԳՀ | դրամ | 891000 | 1 | 891.0 |
| 71351540 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի փողոցների հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում /պետության մասնաբաժին/ | ԳՀ | դրամ | 280 800 | 1 | 280.8 |
| | **Աշխատանքներ /հոդված-5112/** | | | | | |
| 45311142 | Վանաձոր համայնքի խաչմերուկներում լուսացույցների տեղադրման աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 19800000 | 1 | 19800,00 |
| | **Աշխատանքներ /հոդված-5113/** | | | | | |
| | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ /սուբվենցիոն ծրագիր/ | | | | | |
| 45231220 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ /պետության մասնաբաժին/ | ԲՄ | դրամ | 96 790 613 | 1 | 96790.61 |
| | **Վանաձոր համայնքի Տարոն 2 թաղամասի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ /սուբվենցիոն ծրագիր/** | | | | | |
| 45231220 | Վանաձոր համայնքի Տարոն 2 թաղամասի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ /պետության մասնաբաժին/ | ԲՄ | դրամ | 242122500 | 1 | 242122,50 |
| | **Վանաձոր համայնքի Թատերական և Սոս Սարգսյան փողոցների հիմնանորոգման աշխատանքներ /սուբվենցիոն ծրագիր/** | | | | | |
| 45231220 | Վանաձոր համայնքի Թատերական և Սոս Սարգսյան փողոցների հիմնանորոգման աշխատանքներ /պետության մասնաբաժին/ | ԳՀ | դրամ | 72 792 000 | 1 | 72 792.0 |
| | **աշխատանքներ/հոդված 4251/** | | | | | |
| 45221142 | Վանաձոր համայնքի տիկնիկային թատրոնի մայթի կառուցման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 8935640 | | 8935.64 |
| **Բաժին -05 խումբ -1 դաս-1 Աղբահանում** | | | | | | |
| **կոմունալ ծառայություններ/հոդված 4213/** | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 90611100 | Վանաձոր համայնքի 1-ին գոտու սանիտարական մաքրման ծառայություններ | ԳՀ | դրամ | 8199584 | 1 | 8199.584 |
| 90511100 | Վանաձոր համայնքի 2-րդ գոտու սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայություններ/59 օրվա համար/ | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 90511100 | Վանաձոր համայնքի 2-րդ գոտու սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայություններ/59 օրվա համար/ | ԳՀ | դրամ | 7696332 | 1 | 7696,332 |
| 90511100 | Վանաձոր համայնքի 3-րդ գոտու սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայություններ/59 օրվա համար/ | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 90511100 | Վանաձոր համայնքի 3-րդ գոտու սանիտարական մաքրման և կենցաղային աղբահանության ծառայություններ/59 օրվա համար/ | ԳՀ | դրամ | 9550450 | 1 | 9550,45 |
| 90611100 | Վանաձոր համայնքի 4-րդ գոտու սանիտարական մաքրման ծառայություններ | ԳՀ | դրամ | 5600000 | 1 | 5600.000 |
| 90611100 | Վանաձոր համայնքի 5-րդ գոտու սանիտարական մաքրման ծառայություններ | ԳՀ | դրամ | 9350000 | 1 | 9350.000 |
| 90611100 | Վանաձոր համայնքի 6-րդ գոտու սանիտարական մաքրման ծառայություններ | ԳՀ | դրամ | 11934139 | 1 | 11934.139 |
| 90511100 | Վանաձոր համայնքի Դարպաս բնակավայրի կենցաղային աղբահանության ծառայությունների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 3000000 | 1 | 3000,00 |
| 90511100 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակայվայրի կենցաղային աղբահանության ծառայությունների ձեռքբերում/2025թ. հունվարից հունիսի 30-ի համար/ | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 90511100 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակայվայրի կենցաղային աղբահանության ծառայությունների ձեռքբերում/2025թ. հունվարից հունիսի 30-ի համար/ | ԳՀ | դրամ | 4550000 | 1 | 4550,00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 90611100 | Վանաձոր համայնքի 2-րդ գոտու փողոցների սանիտարական մաքրման ծառայություններ | ԳՀ | դրամ | 4644432 | 1 | 4644,432 |
| 90611100 | Վանաձոր համայնքի 3-րդ գոտու փողոցների սանիտարական մաքրման ծառայություններ | ԳՀ | դրամ | 9759610 | 1 | 9759,61 |
| 90511100 | Վանաձոր համայնքի 2-րդ գոտու կենցաղային աղբահանության ծառայութունների ձեռքբերում/20 օրվա համար/ | ԳՀ | դրամ | 2881600 | 1 | 2881,6 |
| 90511100 | Վանաձոր համայնքում շաբաթօրյակների իրականացման ծառայությունների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 2907530 | 1 | 2907,53 |
| | **Վանաձոր համայնքի խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման ծառայություն** | | | | | |
| 90511100 | Վանաձոր համայնքի խոշոր եզրաչափի աղբի տեղափոխման ծառայություն | ԳՀ | դրամ | 14990400 | 1 | 14990,40 |
| | **ծառայություններ /հոդված 4239/** | | | | | |
| 45111300 | Արջուտի աղբաթափման վայրում կուտակված աղբի հողածածկման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 2499470 | 1 | 2499,47 |
| 45231183 | Տարոն-4 թաղամասի աղբաթափման վայրի հարակից տարածքի հարթեցման և մաքրման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 4726900 | 1 | 4726.9 |
| | **Բաժին -05 խումբ -2 դաս-1-Կեղտաջրերի հեռացում** | | | | | |
| | **Ծառայություններ /հոդված-4239/** | | | | | |
| 90441100 | Վանաձոր համայնքի անձրևաջրատար դիտահորերի և կոյուղագծերի սպասարկում | ԳՀ | դրամ | 20000000 | 1 | 20000,00 |
| | **Բաժին -06 խումբ -1 դաս-1-Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ** | | | | | |
| | **Ծառայություններ /հոդված-4239/** | | | | | |
| 98371120 | Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի գերեզմանատան սպասարկման ծառայություններ | ՄԱ | դրամ | 990000 | 1 | 990.0 |
| 32321130 | տեղեկատվական տեսանյութերի պատրաստման ծառաթյուններ | ՄԱ | դրամ | 400000 | 1 | 400.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Բաժին -06 խումբ -3 դաս-1** | | | | | | |
| **Ծառայություններ /հոդված-4239/** | | | | | | |
| 98111140 | Վանաձորի համայնքի կարիքների համար Հայքի հրապարակի,Շառլ Ազնավուրի անվան զբոսայգու, Տարոն-4 թաղամասի Մարդու իրավունքների այգու և Սայաթ Նովայի անվան այգու շատրվանների և ջրավազանների սպասարկման և վերանորոգման ծառայություններ | ՄԱ | դրամ | 11 685 070 | 1 | 11 685.0 |
| **Բաժին -06 խումբ -4 դաս-1-Փողոցների լուսավորություն** | | | | | | |
| **ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ /Հոդված 4239/** | | | | | | |
| 50231200 | Վանաձոր համայնքի փողոցային լուսավորության,շենքերի արտաքին լուսավորության սպասարկում և շահագործում | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 50231200 | Վանաձոր համայնքի փողոցային լուսավորության,շենքերի արտաքին լուսավորության սպասարկում և շահագործում | ԳՀ | դրամ | 19995100 | 1 | 19995100 |
| | **Աշխատանքներ /հոդվածը - 5113/** | | | | | |
| | Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի Բելառուսական 36 փողոցի լուսավորության, Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության և Գուգարք բնակավայրի Քոթեջային 8-րդ փողոցի լուսավորության վերականգնում | | | | | |
| 45451800 | Վանաձոր համայնքի Տարոն-4 թաղամասի Բելառուսական 36 փողոցի լուսավորության վերականգնում | ԳՀ | դրամ | 564000 | 1 | 564.0 |
| 45451800 | Վանաձոր համայնքի Շահումյան բնակավայրի փողոցների լուսավորության վերականգնում | ԳՀ | դրամ | 2388000 | 1 | 2388.0 |
| 45451800 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի Քոթեջային 8-րդ փողոցի լուսավորության վերականգնում | ԳՀ | դրամ | 876000 | 1 | 876.0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 45231220 | Վանաձոր համայնքի Եղիշե Չարենցի փողոցի հիմնանորոգման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 38699342 | 1 | 38699342 |
| 45231220 | Վանաձոր համայնքի Վահան Տերյան փողոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում | ԲՄ | դրամ | 117018000 | 1 | 117018,0 |
| ***Բաժին -06 խումբ -5 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայությունների գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*** | | | | | | |
| **նախագծանախահաշվային աշխատանքների կազմման աշխատանքներ/հոդված 5134/** | | | | | | |
| 71241200 | Վանաձոր համայնքի թվով 50 հատ բազմաբնակարան շենքերի բակերի հիմնանորոգման և խաղահրապարակների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 71241200 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի կոյուղատարի հիմնանորոգման, առաջնային մաքրման փոքր կայանի կառուցման հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 1800000 | 1 | 1800,0 |
| 71241200 | Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգում՝ ճանապարհային երկաթբետոնե սալերի տեղադրմամբ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 1795000 | 1 | 1795,0 |
| 71241200 | Վանաձոր համայնքի Բանակի փողոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 1445000 | 1 | 1445,0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 71241200 | Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտայի Հայքի հրապարակից Թումանյան հրապարակ հատվածի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 71241200 | Վանաձոր համայնքի Լոռի մարզադաշտին մոտեցող Հակոբյան, Աբովյան, Արաբկիրի, Բուսաբանական փողոցների , Զ. Անդրանիկի 1-ին նրբանցքի հիմնանորոգման, ավտոկայանատեղիների կառուցման, տրանսպորտային հանգույցի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 71241200 | Վանաձոր համայնքի թիվ 8 մանկապարտեզի բակի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 1350000 | 1 | 1350,0 |
| 71241200 | Վանաձորի համայնքապետարանի տիկնիկային թատրոնի մայթի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | 1400000 | 1 | 1400,0 |
| 71241200 | Վանաձորի համայնքապետարանի համակարգչային ներքին ցանցի նախագծման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ձեռքբերում | ԳՀ | դրամ | * | 1 | * |
| 71241200 | Վանաձոր համայնքի Իսահակյան փողոց 1-ին նրբանցք 13 հասցեի հարևանությամբ հենապատի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 750000 | 1 | 750,0 |
| ***Փորձաքննության ծառայություններ/հոդված-5134/*** | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 50531140 | **նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություններ** | | | | | **3750,0** |
| 50531140 | Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտայի Հայքի հրապարակից Թումանյան հրապարակ հատվածի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն | ԳՀ | դրամ | 1200000 | 1 | 1200,0 |
| 50531140 | Վանաձոր համայնքի Հրաչյա Ներսիսյան փողոցի 1-ին նրբանցքի հիմնանորոգման՝ ճանապարհային երկաթբետոնե սալերի տեղադրմամբ, նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն | ԳՀ | դրամ | 450000 | 1 | 450,0 |
| 50531140 | Վանաձոր համայնքի Ուսանողական, Շինարարների և Վ. Համբարձումյան փողոցների հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննության ծառայություն | ԳՀ | դրամ | 2100000 | 1 | 2100,0 |
| ***Բաժին-06 խումբ-6 դաս-1 Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ*** (այլ դասերին չպականող) | | | | | | |
| ***Աշխատանքներ /հոդված 5113/ Բակերի բարեկարգում*** | | | | | | |
| 45221142 | Վանաձոր համայնքի թիվ 8 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքներ | ԳՀ | դրամ | 11 683 700 | 1 | 11 683.7 |
| ***Բաժին -08 խումբ -1 դաս-1 Հանգստի և սպորտի ծառայություններ*** | | | | | | |
| ***սպորտային միջոցառումներ/հոդված 4239/*** | | | | | | |
| 92621110 | սպորտային միջոցառումների կազմակերպում | ԷԱՃ | դրամ | 9457777 | 1 | 9457,777 |
| 92621110 | Համահայկական ձմեռային 2-րդ խաղերի սպորտային միջոցառման մասնակցության կազմակերպման ծառայություն | ԷԱՃ | դրամ | 10977777 | 1 | 10977,777 |
| ***Բաժին -08 խումբ -6 դաս-1 Հանգստի, մշակույթ և կրոն*** | | | | | | |
| ***մշակութային միջոցառումներ/հոդված 4239/*** | | | | | | |
| 79951110 | մշակութային միջոցառումների կազմակերպում | ԷԱՃ | դրամ | 9117777 | 1 | 9117.777 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **Բաժին -09 խումբ -1 դաս-1 Նախադպրոցական կրթություն** | | | | | | |
| **Աշխատանքներ/հոդված 5112/** | | | | | | |
| 45211228 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման /2-րդ փուլ, ավարտում/ աշխատանքեր պետության մասնաբաժին | ՀԲՄ | դրամ | 70980000 | 1 | 70980 |
| 45211228 | Վանաձորի թիվ 4-րդ մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցման/2-րդ փուլ ավարտում/ աշխատանքների ծառայություն/պետության մասնաբաժին/ | ԲՄ | դրամ | 69105960 | 1 | 69105960 |
| **Ծառայություններ /հոդված-5112/** | | | | | | |
| 71351540 | Վանաձոր համայնքի թիվ 4 մանկապարտեզի կառուցման/2-րդ փուլ/ աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն /պետության մասնաբաժին/ | ԳՀ | դրամ | 579600 | 1 | 579,60 |
| 71351540 | Վանաձոր համայնքի Գուգարք բնակավայրի մանկապարտեզի կառուցման/2-րդ փուլ/ աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություն/պետության մասնաբաժին/ | ԳՀ | դրամ | 579600 | 1 | 579,60 |

*համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի

**Գնումների բաժնի պետ՝** **Դավիթ Հակոբյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2025 թվականի N 1003

## ՄԱՐԳԱՐԻՏ ԱԼԵՔՍԱՆԻ ՀԱԶՈՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված արձանագրության, զեկուցագրի և ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից ստացված գրության հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից 24.03.2025 թվականին կազմված արձանագրության և զեկուցագրի, ինչպես նաև ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից 21.03.2025թ. ստացված գրության համաձայն՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Զ. Անդրանիկի փողոց թիվ 56 շենքի 37 տարածք հացցեում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 02072024-06-0017 վկայական) Դավիթ Սամվելի Մարգարյանին (հաշվառման հասցե՝ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ փ. 21, տ. 3) սեփականության իրավունքով պատկանող տարածքում ինքնակամ իրականացվում է շինարարական աշխատանքներ: Մարգարիտ Ալեքսանի Հազոյանի կողմից 15.01.2024թ. թիվ 02/823 դիմումին ի պատասխան Վանաձորի համայնքապետարանը թույլատրել է 1 (մեկ) տարի ժամկետով Զ. Անդրանիկի փողոց թիվ 56 շենքի 37 տարածք հասցեի հյուսիսային մասում գտնվող հողամասը բարեկարգել (առանց կառուցապատման իրավունքի):

2025 թվականի մարտի 24-ին հարուցված վարչական վարույթի հիման վրա 2025 թվականի ապրիլի 07-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել են Դավիթ Սամվելի Մարգարյանը և Մարգարիտ Ալեքսանի Հազոյանը (հիմք՝ փոստային առաքման ծանուցման հետադարձ կտրոն թիվ ALO127205143AM, ALO127195865AM), սակայն Մարգարիտ Ալեքսանի Հազոյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին: Դավիթ Սամվելի Մարգարյանը հայտնեց, որ Զ. Անդրանիկի փողոց թիվ 56 շենքի 37 տարածք հասցեի անշարժ գույքը ձեռք է բերել 18.06.2024 թվականին և շինարարական բոլոր աշխատանքները կատարվել են մինչ իր գույքը ձեռք բերելը:

Քանի որ վարչական վարույթի լսումների ընթացքում հայտնի չի դարձել, թե ում կողմից է կատարվել իրավախախտումը, ուստի Վանաձոր համայնքի ղեկավարը, 17.04.2025թ. ներկայացրել է թիվ 01/3172 գրություն Համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Բազումի բաժնին, փոխօգնության կարգով՝ սույն վարույթի շրջանակներում էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների կապակցությամբ որոշակի պարզաբանումներ ստանալու համար:

Գործի համար էական համարվող հանգամանքներ պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել երկարաձգել վարչական վարույթի ժամկետը:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինները պարտավոր են փոխադարձ օգնություն տրամադրել միմյանց՝ իրենց լիազորություններն իրականացնելու համար: Փոխօգնությունը տրամադրվում է փոխօգնություն հայցող վարչական մարմնի հայտի հիման վրա:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետի համաձայն՝ վարչական մարմինն իրավունք ունի երկարաձգել վարչական վարույթի ժամկետը, եթե՝ փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 47-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով, 53-րդ և 58-60-րդ հոդվածներով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1.Գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության նպատակով՝ Մարգարիտ Ալեքսանի Հազոյանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգել մինչև 30 օր ժամկետով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձոր համայնքի ղեկավարին դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Վանաձոր համայնքի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ապրիլի 2025 թվականի N 1004

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 322 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**1. ՀՀ Վանաձոր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի զեկուցագրի և արձանագրության, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից ստացած արձանագրության հիման վրա 2025 թվականի ապրիլի 25-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի հախամաձայն Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի 3/3 հասցեում ակնհայտ շեղումներով և խախտումներով իրականացված շինարարական աշխատանքների հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտ ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի 25.03.2025թ. զեկուցագրի և արձանագրության հիման վրա հարուցվել է վարչական վարույթ՝ Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի 3/3 հասցեում գտնվող ակնհայտ շեղումներով, խախտումներով և առանց համապատասխան փաստաթղթերի (ՀՀ կառավարության 2015թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման Ձև 2 և 5 տեղեկանքներ) շինարարական աշխատանքների իրականացման փաստով:

Հարուցված վարչական վարույթի հիման վրա հրավիրվել են վարչական վարույթի լսումներ սույն թվականի ապրիլի 07-ին, ժամը 11:30-ին, որին մասնակցելու նպատակով ծանուցվել է Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Շահումյան 5 փողոցի, 30 տան բնակիչ Վահագն Միշայի Նալբանդյանը: Վերջինս պատշաճ ծանուցվել և ներկայացել է վարչական վարույթի լսումներին (հիմք՝ փոստային առաքման ծանուցման հետադարձ կտրոն թիվ AL0127195723AM): Վարույթի լսումների ժամանակ քաղաքացի Վահագն Նալբանդյանը հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի կողմից կազմված

արձանագրությունում նշված շինարարական նախագծից շեղումները իրականությանը չեն համապատասխանում, շինարարությունը կատարվում է հաստատված նախագծով:

Հաշվի առնելով, որ համաձայն Վանաձորի ղեկավարի 21 մարտի 2025 թվականի թիվ 112-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 24.03.2025 թվականին իրականացված ստուգումների արդյունքում պարզվել է, որ Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոց 3-2/1 հասցեում Վահագն Նալբանդյանի կողմից իրականացվող շինարարական աշխատանքները իրականացվում են 08.10.2021 թվականի թիվ 322 շինարարական նախագծից ակնհայտ շեղումներով, մասնավորապես՝

1) Նկուղային հարկի ծածկը նախագծի համաձայն՝ իրականացվելու էր երկաթբետոնյա ծակոտիավոր սալերով, սակայն իրականում կառուցվել է երկաթբետոնյա մոնոլիտ ծածկով:

2) Շինության երկաթբետոնյա սյուների ամրանավորումը չի համապատասխանում նախագծին: Նախագծով տրված է իրականացնել 6 F 22 A 500 C մակնիշի ամրաններով, կատարված է՝ F 12,14 և այլ տարբեր տրամագծերի ամրաններով:

3) Ամբողջությամբ ձևափոխված է շինության գլխավոր ճակատային հատվածը, այն իրականացված է տարբեր կոնստրուկտիվ լուծումներով, որը չի համապատասխանում նախագծին:

4) Տանիքի մետաղական ֆերմաները նախագծով նախատեսված է միաթեք, իրականում պատրաստված է երկթեք:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

Հիմք ընդունելով Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի 25.03.2025թ. զեկուցագիրը, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից ստացած 21.03.2025թ. (թիվ ՔՏՄ/19.01/7855-25) արձանագրությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1.Անվավեր ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 08 հոկտեմբերի 2021 թվականի թիվ 322 շինարարության թույլտվությունը:

2.Դադարեցնել շինարարական աշխատանքները:

3.Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելուն հաջորդող օրվանից:

4.Որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից կարող է բողոքարկվել վարչական կարգով Վանաձոր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ — Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 25
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1005

ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ 06-001-0283-0085 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը ղեկավարվելով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով,ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել համայնք Վանաձոր Վանաձոր քաղաք 06-001-0283-0085 կադաստրային ծածկագրով 0.11076հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերի:

2.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի 06-001-0283-0085 կադաստրային ծածկագրով 0.11076հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք.,Ա. Շիրակացու փողոց, 19/2 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1006

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ 06-001-0283-0084 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԿԱՐՏՈԳՐԱՖ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և մասնագիտական եզրակացությունը, ղեկավարվելով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով,ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել համայնք Վանաձոր Վանաձոր քաղաք 06-001-0283-0084 կադաստրային ծածկագրով 0.02165հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերի:

1.Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի 06-001-0283-0084 կադաստրային ծածկագրով 0.02165հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք.,Ա. Շիրակացու փողոց, 19/1 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1007

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 24/1-1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՏ ՎՐՈՒՅՐԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Վրույրի Բաղդասարյանի դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20032023-06-0037 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2002թ. փետրվարի 02-ի թիվ 88 որոշումով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Սասունցիների փողոց թիվ 24/1-1 հասցեում գտնվող, Աշոտ Վրույրի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող 0.0041 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողերից՝ հասարակական կառուցապատման հողերի, 31.57քմ մակերեսով շինության օգտագործման նպատակը՝ արտադրամասից՝ որպես բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական գործառնական նշանակությամբ շինություն :

2.Շինությունների գործառնական նշանակության փոփոխության համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

28 ապրիլի 2025 թվականի N1008

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 8 ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ, ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոֆյա Խուդավերդու Խուդավերդյանի 22.12.2023 թվականի թիվ 02/22926 դիմումը, 05.03.2025 թվականի ավագանու ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը հաստատելու մասին թիվ 7-Լ որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը,հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 19.12.2023 թվականին ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023MVLTN2), 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի $14^3$-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731 Նորոշմամբ հաստատված կարգի 33-րդ և 43.1 կետերով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ և 43.1 կետերով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 8 շենքի հարևանությամբ գտնվող ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 25.20քմ ընդհանուր մակերեսով ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 25.20քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Փոխել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 8 շենքի հարևանությամբ գտնվող 25.20քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման հողերից բնակելի կառուցապատման հողերի:

3.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

4.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի, և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

5"Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

6. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ներսիսյան փողոց թիվ 8 շենքի հարևանությամբ ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք Վանաձոր ք., Մ. Մաշտոցի փողոց, 3-րդ նրբանցք, 8/4 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1009

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 2 Բ (ՊԱՅՄԱՆԱԿԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՋԻՆԱ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՍԱՔՈՒԼՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ջինա Արամայիսի Սաքուլյանի 19.01.2024թ. թիվ 02/1298 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 29.01.2024թ. տրված թիվ 480 (նոտարական ակտի կոդ: 741-20240129-88-7651617), 29.01.2024թ. թիվ 479 (նոտարական ակտի կոդ: 741-20240129-88-7651597) և թիվ 478 (նոտարական ակտի կոդ: 741-20240129-88-7651601) հայտարարությունները, Փոխադարձ հաշվարկների ստուգման ակտը, 13.12.2024թ. «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-382/24 Ի եզրակացությունը, «ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, տեղագրական հատակագիծը և ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 29.12.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023MUQBH) հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 2 բ (պայմանական) հասցեում կառուցված բնակելի տունը և դրա զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 345.80քմ մակերեսով հողամասը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1990թթ.,դրա կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 345.80քմ մակերեսով հողամասը զբաղեցվել և շահագործվում է սկսած 1990թ.-ից:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 143-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Զինա Արամայիսի Սաքույանի սեփականության իրավունքը մինչև 2001թ. մայիսի 15-ը Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 2 բ (պայմանական) հասցեում կառուցված իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 345.80քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

2.Փոխել Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 2 բ (պայմանական) հասցեում գտնվող 0.0034580 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի խառը կառուցապատման հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:

3.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Կ. Դեմիրճյան փողոց, 2/12 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1010

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՐՈՆ-2 ՔՇՀ-3 ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 11-3/1 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԱՎՏՈՏՆԱԿԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրիկ Արշալույսի Սարդարյանի 25.10.20233թ. թիվ 02/18569 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Գասպար Վերիցյան» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, 22.01.2024թ. «ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԲԲԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ 15/6 եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 26.10.2023 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2023YXLQDX), 29.11.2023 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 46 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս թիվ 11-3/1 հասցեին կից ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող 6.13քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 4.56քմ) ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 6.13քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2.Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:

3.Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու

մարզային ստորաբաժանում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված ավտոտնակի և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը իրականացրած անձին ավտոտնակը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:

5. Վանաձոր համայնքի Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս թիվ 11-3/1 հասցեին կից գտնվող ավտոտնակին տրամադրել փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք, Տարոն-2 ՔՇՀ-3 թաղամաս, 11/2 ավտոտնակ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1011

## ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՉԱՐԵՆՑԻ ՓՈՂՈՑ 6 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՇԱ ԱԹԱՐԵԿԻ ՄԱՑԱԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Հիմք ընդունելով Սաշա Աթաբեկի Մացակյանի 25.10.2024 թվականի թիվ 02/18005 դիմումը, 12.05.1987 թվականին տրված տեխնիկական անձնագիրը, 21.11.2023 թվականին տրված թիվ 9359/ նոտարական ակտի կոդ: 763-20231119-84-7483014/, 21.11.2023 թվականին տրված թիվ 9361/ նոտարական ակտի կոդ: 763-20231121-84-7486939/ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 25.02.2025 թվականի «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-36/25 Ի եզրակացությունը, , «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի, շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 21.11.2024 թվականին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 20248QQCWR) և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Չարենցի փողոց 6 տուն հասցեում կառուցված բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ և դրան կից 300.0քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Անհատական բնակելի տունը կառուցվել է 1970-1992թթ.-ին, բնակելի տան զբաղեցրած հողամասի մակերեսը փաստացի կազմում է 600.0քմ:

Ղեկավարվելով 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Սաշա Աթաբեկի Մացակյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Չարենցի փողոց 6 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300.0քմ և դրան կից 300.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ:

2.Ճանաչել Սաշա Աթաբեկի Մացակյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Չարենցի փողոց 6 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 600.0 քմ մակերեսով հողամասի ու դրա վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:

3. Հաստատել Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Չարենցի փողոց 6 հասցեում գտնվող հողամասի 0.06 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

4.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր համայնք, Վանաձոր ք., Ե. Չարենցի փողոց, 6 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1012

## ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՓՈՂՈՑ 5 ՇԵՆՔ ԹԻՎ 16 ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ԿԻՑ, ՇԵՆՔԻ ԾԱՎԱԼԻՑ ԴՈՒՐՍ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՈՏՈՒՄ ՎԱՐՍԻԿ ՎԱԼՈԴՅԱՅԻ ԳՈԳՈՐՅԱՆԻ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍԵՅՐԱՆԻ ՊԱՊԻԿՅԱՆԻ, ԱՆՈՒՇ ՍԵՅՐԱՆԻ ԶԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՆՆԱ ՍԵՅՐԱՆԻ ՊԱՊԻԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աննա Սեյրանի Պապիկյանի, Վարսիկ Վալոդյայի Գոգորյանի դիմումը ով հանդիսանում է նաև Արմենուհի Սեյրանի Պապիկյանի և Անուշ Սեյրանի Զարգարյանի լիազորված անձը, 26.09.2024թ. թիվ 7340 (նոտարական ակտի կոդ: 763-20240926-84-8371724) ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, 19.03.2024թ. տրված թիվ 2468 լիազորագիրը (նոտարական ակտի կոդը: 454-20240319-79-7790049), 25.09.2023 թվականի թիվ 50 ԱԲ 9296456 լիազորագրի ռուսերենից հայերեն թիվ 1316 թարգմանությունը (նոտարական ակտի կոդը: 741-20240313-67-7770960), անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 0111039 վկայականը, «ՇԱՀՄԱՐ» համատիրության նախագահի կողմից հաստատված սեփականատերերի համաձայնությունը, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 13.12.2024թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-383/24 Ի եզրակացությունը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱՁ-ի կողմից տրված շինությունների հատակագիծը, շինությունների բնութագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 28-րդ, 31-րդ կետերով, 32-րդ կետի բ) և գ) ենթակետերով և ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1.Ճանաչել օրինական Աննա Սեյրանի Պապիկյանին (1/5), Վարսիկ Վալոդյայի Գոգորյանին (2/5), Արմենուհի Սեյրանի Պապիկյանին (1/5), Անուշ Սեյրանի Զարգարյանին (1/5) սեփականության իրավունքով պատկանող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, Վանաձոր քաղաքի Շինարարների փողոց թիվ 5 շենքի ծավալից դուրս, շենքի սպասարկման գոտում, թիվ 16 բնակարանին կից 7.3քմ արտաքին մակերեսով (ներքին՝ 5.13քմ ) ինքնակամ կառուցված բնակարանը :

2.Սույն որոշման 1-ին կետում նշված 7.3քմ արտաքին (ներքին՝ 5.13քմ) մակերեսով ինքնակամ կառուցված բնակարանի օրինականացման համար սահմանված վճարը՝ 4320 (չորս հազար երեք հարյուր քսան) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1013

## ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 12 ՇԵՆՔԻ ԹԻՎ 15 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱԼԻԲԵԿԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, ԱՆԺԻԿ ԱՐՏԱՇԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԵՎ ՆԱՐԵԿ ԱՐՇԱԼՈՒՅՍԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արշալույս Ալիբեկի Ղազարյանի (1954թ.) դիմումը, ղեկավարվելով «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 որոշմամբ, Վանաձոր համայնքի ավագանու 2001թ. մարտի 23-ի թիվ 21 և 2005թ. օգոստոսի 26-ի թիվ 212 որոշումներով՝ որոշում եմ.

1.Հանձնարարել Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.) դիմելու ՀՀ կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 12 շենքի թիվ 15՝ երկու սենյականոց բնակարանի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

2.Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 12 շենքի թիվ 15՝ երկու սենյականոց բնակարանը 13 000 դրամով ուղղակի վաճառքի ձևով որպես սեփականություն՝ օտարել նշված բնակարանի վարձակալներ՝ Արշալույս Ալիբեկի Ղազարյանին, Անժիկ Արտաշի Ավետիսյանին և Նարեկ Արշալույսի Ղազարյանին:

3.Վանաձոր քաղաքի Վարդանանց փողոցի թիվ 12 շենքի կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի համապատասխան չափաբաժնի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է անհատույց փոխանցման շենքի թիվ 15 բնակարանի վարձակալներ՝ Արշալույս Ալիբեկի Ղազարյանին, Անժիկ Արտաշի Ավետիսյանին և Նարեկ Արշալույսի Ղազարյանին:

4.Քաջիկ Թադևոսյանին՝ (անձնագիր՝ AT0695328, տրված՝ 018-ի կողմից 12/03/2021թ.-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ Փ., 37Շ. 28ԲՆ.)՝ Արշալույս Ալիբեկի Ղազարյանի, Անժիկ Արտաշի Ավետիսյանի և Նարեկ Արշալույսի Ղազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել բնակարանի առուվաճառքի և հողամասի անհատույց փոխանցման պայմանագիր՝ որպես նրանց ընդհանուր բաժնային սեփականություն՝ հավասար բաժիններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1014

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Ս. ԹԵՎՈՍՅԱՆ ՓՈՂՈՑ 7/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱԼԼԱ ՍԵԼՄԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալլա Սելմանի Նազարյանի 22.02.2024թ. թիվ 02/3898 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25032025-06-0006 և Ալլա Սելմանի Նազարյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15022024-06-0053 վկայականները, 13.05.2024թ. Վանաձոր համայնքի ավագանու թիվ 28 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, 12.04.2022թ. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ընդունած ՀՕ 93-Ն ՀՀ օրենքով՝ որոշում եմ.

1.Վանաձոր համայնքի Վանաձոր քաղաքի Ս. Թևոսյան փողոց 7/1 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 401.64քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 25032025-06-0006 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 1790000 (մեկ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Ալլա Սելմանի Նազարյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով:

2.Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Ալլա Սելմանի Նազարյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 401.64քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ ապրիլի 28
ք. Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1015

### ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՌԻՄԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ»-Ն ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «ՌԻՄԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» 2025 թվականի ապրիլի 22-ի թիվ 01/5644 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ ***որոշում եմ.***

1.Բավարարել Երևան քաղաքի Չեխովի փող. թիվ 10/88 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «ՌԻՄԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ ՏԻԳՐԱՆԻ» հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Տիգրան Մեծի պող. թիվ 34բ/1 հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3.Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1016

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՁՈՐՅԱՆ (ՍՊԱՆԴԱՐՅԱՆ) ՓՈՂՈՑ ԹԻՎ 30/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՇՈՏ ՌԱՖԻԿԻ ԵՐԵՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՃՇՏՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26 ՄԱՐՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 763 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Աշոտ Ռաֆիկի Երեմյանի 17.04.2025 թվականի թիվ 02/5385 դիմումը, 08.04.2025 թվականի ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու թիվ Կ-08042025-06-0102 և Կ-08042025-06-0103որոշումը,անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 391949 վկայականը, «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը և եզրակացությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 16.04.2025 թվականի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր: 2025TTZSSL), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշումով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Ձորյան (Սպանդարյան) փողոց թիվ 30/3 հասցեում գտնվող Աշոտ Ռաֆիկի Երեմյանին սեփականության իրավունքով պատկանող 0.1268 հա մակերեսով հողամասի ճշտված սահմանները՝ համաձայն համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծերի:

2. Հողամասում առկա ինքնակամ շինությունները թողնել ինքնակամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Վանաձոր համայնքի ղեկավարի 26 մարտի 2025 թվականի «Վանաձոր համայնք Վանաձոր քաղաքի Ձորյան (Սպանդարյան) փողոց թիվ 30/3 հասցում գտնվող Աշոտ Ռաֆիկի Երեմյանի սեփականության իրավունքով պատկանող հողամասը երկու առանձին գույքային միավորների տարանջատելու, հողամասի ճշտված սահմանները հաստատելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» 763 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1017

### ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Հ.ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀՈՂԱՄԱՍԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍԱՄՎԵԼ ՎԱՉԱԳԱՆԻ ՍԻՐԱԴԵՂՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սամվել Վաչագանի Սիրադեղյանի դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16072024-06-0037 և Սամվել Վաչագանի Սիրադեղյանի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1981168 վկայականները, 29 նոյեմբերի 2023 թվականի Վանաձոր համայնքի ավագանու թիվ 47 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով և 2-րդ մասով, 12.04.2022թ. «ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ընդունած ՀՕ 93-Ն ՀՀ օրենքով՝ ***որոշում եմ.***

1. Վանաձոր քաղաքի Հ.Ներսիսյան փողոց 1-ին նրբանցք թիվ 3/5 հասցեում գտնվող, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 114.82քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16072024-06-0037 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 510010 (հինգ հարյուր տասը հազար տասը) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Սամվել Վաչագանի Սիրադեղյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Սամվել Վաչագանի Սիրադեղյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 114.82քմ մակերեսով հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ համայնքի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1018

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11 ՀՈՒԼԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1573 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի ղեկավարի 11.07.2024 թվականի թիվ 1573 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1.Ուժը կորցրած ճանաչել Վանաձորի համայնքի ղեկավարի 11 հուլիսի 2024 թվականի «Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաքի Լոռվա խճուղի 2/5 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված հողամասը Արմենուհի Ռուդիկի Հարությունյանի նախապատվության իրավունքով օտարելու, գործառնական նշանակությունը փոխելու մասին» թիվ 1573 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Հեռ. 060 650162, 060 650040 vanadzor.lori@mta.gov.am,
info@vanadzor.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 ապրիլի 2025 թվականի N 1019

### ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔ Գ. ՆԱՐԵԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉՎԱԾ ԾԱԾԿԸ ԵՎ ԴՐԱՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԼՅՈՎԱ ԱՐԱՄԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լյովա Արամի Դարբինյանի 17.08.2024թ. թիվ 02/14018 դիմումը, Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20032025-06-0018 վկայականը, Վանաձոր համայնքի ավագանու 13.05.2024թ. թիվ 31 որոշումը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ կետի բ) ենթակետով, 33.2-րդ, 34-րդ կետերով, 35-րդ կետի բ) և ե) ենթակետերով՝ որոշում եմ.պ

1. Վանաձոր համայնք, Վանաձոր քաղաք Գ. Նարեկացու փողոց 3/1 հասցեում գտնվող, Վանաձոր համայնքի սեփականությունը ճանաչված 16.31քմ մակերեսով ծածկը 32120 (երեսուներկու հազար հարյուր քսան) դրամով և դրանով զբաղեցված և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 16.31քմ մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 72450 (յոթանասուներկու հազար չորս հարյուր հիսուն) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Լյովա Արամի Դարբինյանին:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Լյովա Արամի Դարբինյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ծածկի և հողամասի առուվաճառքի պայմանագիր, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, հաշվառման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
РА ЛОРИЙСКАЯ ОБЛАСТЬ МУНИЦИПАЛИТЕТ ВАНАДЗОР
RA LORI REGION VANADZOR MUNICIPALITY
06967534

2025թ. ապրիլի 28
ք.Վանաձոր